

ՆՎԵՐ ՔԱՐՏԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ընդունվել է Ամերիաբանկ ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) Տնօրինության 28.09.2011թ. թիվ 113/09/11 որոշմամբ, գործող խմբագրությունը՝ 16.09.2024թ. թիվ 02/136/24 որոշմամբ և ուժի մեջ է ներքևում նշված ամսաթվից:

1. Քարտի արժույթ	ՀՀ դրամ
2. Նվեր քարտի թողարկում	Անվճար
3. Նվեր քարտի սպասարկում (գանձվում է միանվագ՝ քարտի տրամադրման պահին)	
3.1. Բանկի նվեր քարտի համար	3,000 ՀՀ դրամ
3.2. Բանկի և առևտրի կենտրոնի համատեղ նվեր քարտի համար	Անվճար
4. Նվեր քարտի նվազագույն սահմանաչափ	
4.1. Բանկի նվեր քարտի համար	10,000 ՀՀ դրամ
4.2. Բանկի և առևտրի կենտրոնի համատեղ նվեր քարտի համար	5,000 ՀՀ դրամ
5. Նվեր քարտի առավելագույն սահմանաչափ ¹	500,000 ՀՀ դրամ
6. Կանխիկի տրամադրում ²	
6.1. Ամերիաբանկի բանկոմատներում և կանխիկացման կետերում	2%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
6.2. ՀՀ այլ բանկերի բանկոմատներում և կանխիկացման կետերում	2.5%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
7. Նվեր քարտին առկա գումարի ³ փոխանցում այլ հաշվի՝ սույն պայմաններով սահմանված դեպքերում	
7.1. Բանկի նվեր քարտի համար	2%, նվազագույնը՝ 1,000 ՀՀ դրամ
7.2. Բանկի և առևտրի կենտրոնի համատեղ նվեր քարտի համար	1%, նվազագույնը՝ 500 ՀՀ դրամ
8. Բանկի և առևտրի կենտրոնի համատեղ նվեր քարտի փոխարինում նորով՝ սույն պայմաններով սահմանված դեպքերում	Անվճար
9. Անկանխիկ գործարքներ	Անվճար
10. Քարտային հաշվի մնացորդի վրա հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%
11. Նվեր քարտի գործողության ժամկետ	1 տարի

¹ Բանկի կողմից կազմակերպվող խաղարկությունների և արշավների շրջանակներում Բանկի կողմից Բանկի հաճախորդներին տրամադրվող նվեր քարտերի համար առավելագույն սահմանաչափ չի սահմանվում:

² Կանխիկի տրամադրումը կիրառելի չէ Բանկի և առևտրի կենտրոնի համատեղ նվեր քարտի համար:

³ Եթե նվեր քարտի ժամկետի ավարտին քարտային հաշվի մնացորդը չի բավարարում միջնորդավճարի գանձմամբ գործարք կատարելու համար, գումարը փոխանցվում է հաճախորդի այլ հաշվին առանց միջնորդավճարի գանձման:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Բանկը տրամադրում է հետևյալ նվեր քարտերի տեսակները.

1.1.1. Բանկի նվեր քարտ,

1.1.2. Բանկի և առևտրի կենտրոնի համատեղ նվեր քարտ⁴,

1.2. Սույն պայմանների իմաստով Նվիրատու կարող են լինել Բանկի նվեր քարտերի դեպքում ֆիզիկական անձ հաճախորդները, Բանկի և առևտրի կենտրոնի համատեղ նվեր քարտերի դեպքում՝ ֆիզիկական անձ և ռեզիդենտ իրավաբանական անձ/անհատ ձեռնարկատեր հաճախորդները, իսկ նվիրատու կարող են լինել ֆիզիկական անձ հաճախորդները (այսուհետ՝ սույն պայմանների համապատասխան կարգավորումը և՛ նվիրատուի, և՛ նվիրատուի նկատմամբ կիրառելի լինելու դեպքում՝ Հաճախորդ, եթե սույն պայմանների տվյալ դրույթով այլ բան սահմանված չէ):

1.3. Բանկը տրամադրում է միայն ակտիվացում պահանջող նվեր քարտեր:

1.4. Նվեր քարտի վրա չի նշվում քարտապանի անունը և ազգանունը:

1.5. Նվեր քարտը ենթակա չէ օգտագործման ինտերնետ միջավայրում:

1.6. Նվեր քարտը ենթակա չէ վերաթողարկման: Նվեր քարտը կարելի է փոխարինել նոր նվեր քարտով՝ սույն պայմաններում նշված դեպքերում:

1.7. Նվեր քարտը ենթակա չէ հավելյալ լիցքավորման:

1.8. Նվեր քարտի գումարը հնարավոր է օգտագործել այն ակտիվացնելուց հետո՝ բացառապես նվեր քարտի ֆիզիկական օգտագործմամբ:

1.9. Բանկի և առևտրի կենտրոնի համատեղ նվեր քարտերը հնարավոր է օգտագործել միայն անկանխիկ վճարումների համար՝ տվյալ առևտրի կենտրոնում գործող առևտրի և սպասարկման կետերում:

1.10. Բանկը տրամադրում է նվեր քարտ՝ Բանկի սահմանած ձևանմուշով նվիրատուի կողմից Բանկ ներկայացված նվեր քարտի տրամադրման հայտ-պայմանագրի հիման վրա:

1.11. Բանկը ակտիվացնում է նվեր քարտը՝ Բանկի սահմանած ձևանմուշով նվիրատուի կողմից Բանկ ներկայացված նվեր քարտի ակտիվացման հայտ-պայմանագրի հիման վրա:

1.12. Նվեր քարտի համար հասանելի չէ քարտով կատարված գործարքների մասին SMS հաղորդագրության ուղարկման ծառայությունը:

1.13. Նվեր քարտի գործողության ժամկետի ընթացքում, եթե այն դեռ չի ակտիվացվել, նվիրատուն կարող է դիմել Բանկ նվեր քարտը չեղյալացնելու համար և հետ ստանալ գումարը (բացառությամբ սույն պայմաններով սահմանված միջնորդավճարների): Սույն կետը կիրառելի չէ Բանկի և առևտրի կենտրոնի համատեղ նվեր քարտերի համար:

1.14. Նվեր քարտի գործողության ժամկետի ընթացքում քարտի կորստի, վնասման, PIN կոդը մոռանալու, բանկումատում առգրավման դեպքերում, ինչպես նաև նվեր քարտի հետ

կապված այլ խնդիրների առկայության դեպքում, իսկ Բանկի նվեր քարտի դեպքում՝ նաև գործողության ժամկետի ավարտից հետո քարտի գումարը ստանալու նպատակով Բանկ կարող է դիմել նվիրառուն, իսկ եթե նվեր քարտը դեռ չի ակտիվացվել, ապա՝ նվիրատուն:

1.14.1. Բանկի նվեր քարտերի դեպքում Բանկը հնարավորության դեպքում շտկում է խնդիրը/վերադարձնում է քարտը Հաճախորդին, իսկ անհնարինության կամ քարտի գործողության ժամկետը ավարտված լինելու դեպքում նվեր քարտին առկա գումարը Բանկը, գանձելով սույն պայմաններով սահմանված միջնորդավճարները, վճարում է Հաճախորդին (նվիրառուին, իսկ եթե քարտը չի ակտիվացվել, ապա՝ նվիրատուին)՝ վերջինիս նախընտրությամբ՝ կանխիկ եղանակով կամ փոխանցելով հաշվեհամարին՝ համաձայն նրա հանձնարարականի:

1.14.2. Բանկի և առևտրի կենտրոնի համատեղ նվեր քարտի դեպքում.

1.14.2.1. Եթե նվեր քարտը արդեն ակտիվացվել է, ապա Բանկը հնարավորության դեպքում շտկում է խնդիրը / վերադարձնում է քարտը նվիրառուին, իսկ անհնարինության դեպքում քարտը Բանկի կողմից փոխարինվում է նոր նվեր քարտով՝ տրամադրելով այն նվիրառուին, և քարտին առկա գումարը փոխանցվում է նոր նվեր քարտի հաշվին՝ գանձելով սույն պայմաններով սահմանված միջնորդավճարները: Նոր նվեր քարտի համար նվիրառուն պետք է Բանկ ներկայացնի նվեր քարտի ակտիվացման համար անհրաժեշտ փաստաթղթերը, իսկ նվիրատուի՝ նախկինում տրված տեղեկատվությունն ու հանձնարարականները պահպանվում են նաև նոր նվեր քարտի համար:

1.14.2.2. Եթե նվեր քարտը դեռ չի ակտիվացվել, նվեր քարտին առկա գումարը Բանկը փոխանցում է նվիրատուի հանձնարարականում նշված հաշվեհամարին՝ գանձելով սույն պայմաններով սահմանված միջնորդավճարները:

1.15. Նվեր քարտի կորստի կամ դրա անօրինական օգտագործման արդյունքում (այդ թվում՝ երրորդ անձանց կողմից նվեր քարտի օգտագործման դեպքում) առաջացած բոլոր ռիսկերը կրում է նվիրառուն, իսկ եթե նվեր քարտը դեռ չի ակտիվացվել, ապա՝ նվիրատուն:

1.16. Նվեր քարտի գործողության ժամկետի ավարտից հետո նվեր քարտը և քարտային հաշիվը փակվում են զրոյական մնացորդի դեպքում: Եթե քարտին առկա է դրական մնացորդ, ապա քարտը փակվում է, այնուհետև դրական մնացորդի փոխանցումը կատարվում է ստորև նշված կարգով՝ գանձելով սահմանված միջնորդավճարը.

1.16.1. Բանկի նվեր քարտերի դեպքում՝ համաձայն նվիրառուի հանձնարարականի, իսկ եթե նվեր քարտը դեռ չի ակտիվացվել, ապա համաձայն նվիրատուի հանձնարարականի:

1.16.2. Բանկի և առևտրի կենտրոնի համատեղ նվեր քարտերի դեպքում՝ համաձայն նվիրատուի հանձնարարականի:

1.17. Նվեր քարտի գործողության ժամկետի ավարտից հետո, եթե դրական մնացորդի փոխանցման համար անհրաժեշտ տեղեկատվություն չի տրամադրվել Հաճախորդի կողմից՝ համաձայն 1.16 կետի կամ եթե տրամադրված հաշվեհամարին փոխանցում կատարելն անհնար է, ապա նվեր քարտի փակումից հետո նվեր քարտին դրական մնացորդի առկայության դեպքում քարտային հաշիվը սպասարկվում է համաձայն «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմանների»⁵ և «Ամերիաբանկ ՓԲԸ Վճարային քարտերի սպասարկման պայմանների և օգտագործման կանոնների»⁶:

1.18. Սույն պայմանները գործում են ի լրումն «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմանների»⁵ «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատերերին) բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմանների»⁷ և «Ամերիաբանկ ՓԲԸ Վճարային քարտերի սպասարկման պայմանների և օգտագործման կանոնների»⁶:

1.19. Նվեր քարտի հետ կապված հարցերով կամ տեղեկատվության տրամադրման համար հեռախոսակապի միջոցով Բանկի հետ կապ հաստատելու համար գործում են Բանկի՝ (+37410) 561111 և (+37412) 561111 շուրջօրյա հեռախոսահամարները:

⁴ Բանկի և առևտրի կենտրոնի համատեղ նվեր քարտերը կարող են տրամադրվել և ակտիվացվել միայն Բանկի՝ տվյալ առևտրի կենտրոնում գործող մասնաճյուղում:

⁵ «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից ֆիզիկական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ (11RBD RL 72-01-01), ընդունվել է Բանկի Տնօրինության 04.02.2015թ. թիվ 02/03/15 որոշմամբ: Հղումը՝ <https://ameriabank.am/useful-links>

⁶ «Ամերիաբանկ» ՓԲԸ վճարային քարտերի սպասարկման պայմաններ և օգտագործման կանոններ (11RBD/12CIB RL 72-01-03), ընդունվել է Բանկի Տնօրինության 08.07.2015թ. թիվ 03/17/15 որոշմամբ: Հղումը՝ <https://ameriabank.am/useful-links>

⁷ «Ամերիաբանկ» ՓԲԸ կողմից իրավաբանական անձանց բանկային ծառայությունների մատուցման հիմնական պայմաններ (11RBD/12CIB RL 72-01-02), ընդունվել է Բանկի Տնօրինության 04.02.2015թ. թիվ 02/03/15 որոշմամբ: Հղումը՝ <https://ameriabank.am/useful-links>

Ֆիզիկական անձ նվիրատուի կողմից, ինչպես նաև քարտի ակտիվացման համար նվիրատուի կողմից ներկայացվող փաստաթղթեր՝

- Անձր հաստատող փաստաթուղթ⁸,
- Հանրային ծառայությունների համարանիշ (կիրառելի չէ ոչ ՀՀ քաղաքացիների համար)⁹: Եթե նվիրատուն չի ցանկանում հաշիվ բացել Բանկում, հանրային ծառայությունների համարանիշը չի պահանջվում:

Անհատ ձեռնարկատեր նվիրատուի կողմից ներկայացվող փաստաթղթեր՝

- Անձր (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ⁸,
- Հանրային ծառայությունների համարանիշ (կիրառելի չէ ոչ ՀՀ քաղաքացիների համար)⁹: Եթե նվիրատուն չի ցանկանում հաշիվ բացել Բանկում, հանրային ծառայությունների համարանիշը չի պահանջվում:

- Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք,
- Հարկ վճարողի հաշվառման համարը (չի պահանջվում, եթե ներառված է Պետական միասնական գրանցամատյանից քաղվածքում):

Իրավաբանական անձ նվիրատուի կողմից ներկայացվող փաստաթղթեր՝

- Կանոնադրություն,
- Պետական միասնական գրանցամատյանից քաղվածք, ներառյալ գործադիր մարմնի ղեկավար(ներ)ի վերաբերյալ տեղեկատվությունը,
- Գործադիր մարմնի ղեկավար(ներ)ի և գործարքներ կատարելու իրավասություն ունեցող անձանց անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթեր⁸,
- Հարկ վճարողի հաշվառման համարը (չի պահանջվում, եթե ներառված է Պետական միասնական գրանցամատյանից քաղվածքում):

⁸ Անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթ է համարվում՝

ա) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար՝ անձնագիրը (այդ թվում՝ կենսաչափական անձնագիրը), նույնականացման քարտը, զինվորական գրքույկը՝ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց համար, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը կամ ժամանակավոր վկայականը, մինչև 16 տարեկան երեխաների համար՝ անձնագիրը, ծննդյան վկայականը.

բ) ապաստան հայցողների համար՝ ապաստան հայցողի անձը հաստատող վկայականը.

գ) փախստական ճանաչված, ինչպես նաև քաղաքական ապաստանի իրավունք ստացած անձանց համար՝ կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթը.

դ) օտարերկրյա քաղաքացիների համար՝ օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության կողմից տրված անձնագիրը (այդ թվում՝ դիվանագիտական անձնագիրը) կամ ճամփորդական փաստաթուղթը (միջազգայնորեն ճանաչված), ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող փաստաթղթերը՝ մշտական կացության քարտը, ժամանակավոր կացության քարտը, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիրը.

ե) քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օտարերկրյա պետության կողմից տրված ճամփորդական փաստաթուղթը, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող քաղաքացիություն չունեցող անձի կացության վկայականը, Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակությունը հավաստող փաստաթղթերը՝ մշտական կացության քարտը, ժամանակավոր կացության քարտը, Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիրը.

զ) ժամանակավոր պաշտպանություն ստացած փախստականի համար՝ ժամանակավոր պաշտպանված անձի անձը հաստատող փաստաթուղթ (ժամանակավոր ապաստանի վկայական):

⁹ Հանրային ծառայությունների համարանիշը ամրագրվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու նույնականացման քարտում, օտարերկրյա քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետությունում կացության քարտում, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձի, փախստականի ինքնությունը հավաստող փաստաթղթերում, ինչպես նաև ՀՀ Ոստիկանության կողմից տրամադրված համապատասխան տեղեկանքում: Նախկինում տրամադրված սոցիալական ապահովության քարտի համարը նույնպես համարվում

է հանրային ծառայությունների համարանիշ: Հանրային ծառայությունների համարանիշը արտացոլող փաստաթուղթը կարող է ներկայացվել ինչպես բնօրինակ, այնպես էլ պատճենը: Հանրային ծառայությունների համարանիշ չունենալու դեպքում հաճախորդը պետք է ներկայացնի ՀՀ Ոստիկանության կողմից տրամադրված տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ չստանալու վերաբերյալ: